

## ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

14) ԳԻՕԹԻ, «Ֆառուս», ոլբերգութիւն, առաջին մաս, թարգմ. գերմ. Գ. Բարխտարեանց: Հեղինակի պատկերով և կարեոր ծանօթութիւններով: Հրատարակութիւն Ա. Բարեանի: Թիֆլիս, 1902 թ., գինն է 2 ռ.

Առհասարակ գժուար է այնպէս թարգմանել ամեն մի գեղարուեստական գրուածք, որ բնագրի ճշտութեան հետ պահպանուի և նրա ոճի գեղեցկութիւնը: Եթէ հեղինակը հարկ է համարել այս կամ այն խօսքը գործածել կամ հակիրճ և ուժեղ շեշտով արտայայտել մի բան կամ դիտմամբ լակոնիկ լինել—իրաւունք չունի թարգմանիչը իր սեփական խօսքերով՝ միայն մօտաւոր գաղափար տալ հեղինակի սասածի մասին, հակիրճ ոճի տեղ գործածել ճապաղ շատախօսութիւն, ուժեղ արտայայտութիւնը տափակացնել, ժողովրդական կենդանի ոճի տեղ գործածել շինծու դպրաբանութիւններ: Այս այրութենական ճշմարտութիւնները չեն հասկանում մեր թարգմանիչներից շատերը և կարծում են թէ «հայացնում են», երբ եւրոպական բնադիրների հակիրճ, կորովի և ճիշտ լեզուն զրաբառախան կոնսիստորիական լեզուի են վերածում և անհամ, ճապաղ կերպով «սեփական խօսքերով» են աշխատում արտայայտել հանճարների մտքերը...

Եթէ գժուար է առհասարակ լաւ թարգմանել արձակ գըրուած գեղարուեստական երկերը, հասկանալի է թէ ինչ մեծ ջանքեր և ստեղծագործական ոյժ է պահանջւում թարգմանչից, երբ սս ստանձնում է ամենամեծ բանաստեղծ-մտածողի, Գէօթի «Ֆառուսը» թարգմանել, այն էլ հանգաւոր ստանաւորով: «Ֆառուսի» մէջ պօէզիան և փիլոսափայութիւնը միախանուած են և մի ամբողջութիւն են կազմում. Գէօթէի իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր դարձուածքը չափուած ու կշուած է, և հազիւ թէ այլանդակութիւն չը լինի՝ սեփական խօսքերով նրա մտքերը արտայայտելու ամեն մի փորձ:

Գնահատելով համգերձ պ. Գ. Բարխուդարեանի թէ նախկին թարգմանական աշխատութիւնները և թէ այժմեան փորձը, պէտք է չորհակալ լինել յարգելի թարգմանչոց, որ նա արել է, ինչ կարողացել է: Բայց մինոյն ժամանակ չէ կարելի չը խոստովանել որ մեծ բանաստեղծ-մտածողների երկերը հանգաւոր ոտանաւորով ճիշտ և բանաստեղծօրէն թարգմանելու համար պահանջուռմ է չափազանց խոշոր բանաստեղծական տառանդ, ինչպէս և հայոց նաև կենդանի, ժողովրդական լեզուի կատարեալ տիրապետութիւն. իսկ փոքրիկ բանաստեղծական ձիրքով և գրական շնոծու լեզուի հմտութեամբ կատարած գործը հազիւ թէ կարելի լինի գոհացուցիչ համարել:

Այդ հաստատում է և «Թառատի» թարգմանութեամբ:

Մի կողմ թողնելով առանձին խօսքերի և դարձուածքների անձտութիւնը, օրինակ Knecht (слуга, δασποι)՝ ստրուկ, Lustige Person (шутъ, δαζραδուկ)՝ կատակերգու, Mein Kind—(զաւակ)՝ «հրեշտակ իմ սիրուն» խօսքերով թարգմանելը, որ, յամենայն դէպս, հեշտ խուսափելի անձտութիւն էր, մի կողմն թողնելով «աստ», «անդ» և այլ գրաբառ ձևերի գործածութիւնը, մնում են անհասկանալի, օրինակ, այսպիսի շեղումներ.

Drum hab'ich mich der Magie ergeben

(Այդ պատճառով ես ինձ մողութեան նոփրեցի)

Պ. Գ. Բարխուդարեանը թարգմանում է.

Եւ մոգութեան ինձ կը տամ:

Zur Messe, zur Beichte bist du lange nicht gegangen

(Պատարագի, խոստովանութեան վաղուց է չես գնացել)

Դառել է՝

Ժամ չես ման գալիս (եր. 153):

Բայց ընթերցողին գաղափար տալու համար գերմանական բնագրի և պ. Բարխուդարեանի թարգմանութեան մէջ եղած տարրերութեան մասին մենք աւելի լաւ է առաջ բերենք մի փոքրիկ կտոր, համեմատութեան համար դնելով վակագծում և մեր բառացի թարգմանութիւնը:

Վերցնենք առաջին պատահած կտորը: Յառուստը կանչում է երկրի Ոգուն:

Enthülle dich!

(Յալոնովիր!)

Ha, wie's in meinem Herzen reiszt!

(Ոհ, ինչպէս պատառ պատառ է լինում սիրուս!)

Zu neuen Gefühlen

(Նոր զգացմունքների համար)

All' meine Sinnen sich erwählen!

(Բոլոր իմ մտածմոնքը ելք է որոնում!)

Ich fühle ganz mein Herz dir hingegeben!

(Ես զգում եմ որ ամբողջ սիրոս քեզ է նուիրուած!)

Du muszt! du muszt! und kostet es mein Lehen!

(Դու պէտք է, պէտք է երևաս! թէկուզ այդ լինի իմ կեանքի գնով!)

Ահա ինչպէս է թարգմանել այդ կտորը պ. Գ. Բարխուն-  
դարեանը.

Յոյց տուր ինձ գէմքդ:

Սիրոս զողում է,

Նոր զգացմոնքներով

Սլէկոծվում է:

Քեզ բոլոր սրտով անձնատուր եմ ես,

Թէ մեռնեմ անգամ, պիտի տեսնեմ քեզ:

Իմաստը նոյնն է, իսկ արտայայտութիւնը աւելի թոյլ,  
Բնագրի բանաստեղծական շատ կտորներ հայերէնում ոտանա-  
ւորով գրած պրօզայի են նմանում: Օրինակ.

Թողի դաշտերը և արօտները,

Որոնց ծածկում է խորը գիշերը,

Երկիւղածութեամբ լի է իմ անձը,

Զարթեց սրտիս մէջ բարի նախանձը,

Եւ չեն լուզում ինձ կատաղի կրքեր,

Հոգուս մէջ տիրում է խաղաղոթիւն.

Սրտում վառուց սէր դէպի ընկեր,

Եւ նորից պաշտում եմ աստուածութիւն:

Աւելի ես շինծու են այն կտորները, ուր ժողովրդական  
կենդանի ոճ, հումօր և սրախօսութիւն է գործ ածել Գէօթէն.  
բայց դրա պատճառը արդէն սկզբում բացատրել ենք...

Չը նայած մեր բոլոր ասածներին, պ. Գ. Բարխունգարեանի  
այս թարգմանութիւնն էլ, ինչպէս և նրա նախորդ թարգմա-  
նութիւններն Շիլէրից, Լեսսինգից, Շէքսպիրից ևայլն, շատ օգ-  
տակար են, որովհետեւ մտցնում են եւրոպական հանճարեղ բա-  
նաստեղծ-մտածողների վեհ գաղափարներն ու մտքերը մեր աղ-  
քատիկ գրականութեան մէջ և այդպիսով առողջ մնունդ են  
մատակարարում հայ ընթերցողի հոգուն և որտին: